ՀՀ ԿԳՄՍՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՎՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ/ՎԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը <<Շախմատ>> առարկայի դասավանդման ընթացքում »

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ **Մարտունի**

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հասմիկ Բեյբության**

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Զարուհի Նալբանդյան Վարդանի

ԴՊՐՈՑ՝ **ՀՀ Գեղարքունիքի մարզի Զոլաքար գյուղի Ալվարդ Վարդանյանի անվան N 2 միջնակարգ դպրոց**

Մարտունի **2023**

Բովանդակություն

Ներածություն----------2

Գրական ակնարկ----------5

Փորձարարական դաս 1 ----------7

Փորձարարական դաս 2----------10

Եզրակացություն----------11

Առաջարկություններ----------13

Գրականության ցանկ----------14

Դասի օրվա պլան 1----------16

Դասի օրվա պլան 2----------18

Ներածություն

Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը խորհրդային կրթական համակարգի ժառանգորդն էր և կազմավորվել էր նրա հենքի վրա: Խորհրդային Միությունում միասնական էին կրթական խնդիրները, մեթոդական սպասարկումը: Միասնական էր նաև արժեհամակարգը: Մեզ մնում էր միայն տեղայնացնել կենտրոնից եկած որոշումները: Անկախացումից հետո իրավիճակը կտրուկ փոխվեց: Կրթական համակարգի արմատական վերակառուցման պահանջը կախված էր օդում: Փոխվեց ժամանակաշրջանը, փոխվեցին նաև արժեքները, փոխվեցին արժեքային կողմնորոշումները, նախասիրություններն ու պահանջմունքները: Նոր իրավիճակը համարժեք մոտեցումներ էր պահանջում[1]: Նոր խնդիրներ առաջ եկան, որոնք հրատապ լուծման կարիք ունեին: Շուկայական հարաբերությունների պայմաններում բազմաթիվ արժեքներ, որպես մանրադրամ, շուկա նետվեցին: Նորանկախ հանրապետության նոր սերնդի հասարակական կյանքի, արժեքների նկատմամբ ունեցած վերաբերմունքն ու բարոյական սկզբունքները տարբերվում էին նախորդներից: Կյանքը կառուցվեց նոր կանոնների և նոր նորմերի վրա: Նոր սերնդի համար ժամանակակից աշխարհն իր արժեքային 4 համակարգով բավականին բարդ ու անկանխատեսելի էր թվում: Կրթության հիմնախնդիրներով զբաղված մասնագետներին առաջադրված է ճշգրիտ որոշել և բյուրեղացնել այն գլոբալ արժեքները, որոնք անհրաժեշտ էին քսանմեկերորդ դարի քաղաքացուն: Իսկ որո՞նք են այդ արժեքները, և ի՞նչ մեխանիզմներով էին դրանք հասցվելու սովորողին: Այսօրինակ հարցերը քննարկումների նյութ էին դառնում: Արագընթաց փոփոխությունների, նոր արժեքների այդ հորձանուտում երիտասարդ սերունդը դժվարանում էր իր համար արժեքային կողմնորոշումներ ձևավորել:

Արդի մանկավարժության կարևոր պահանջներից է երեխաների արժեքայինհամակարգի ձևավորումը: Կրթության նպատակը անհատին ոչ միայն գիտելիքներով զինելն է, այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ ձևավորելը: Ինչպես ամբողջ աշխարհում, Հայաստանում էլ այսօր արժեքային կրթությունը հասարակությանը հուզող խնդիրներից մեկն է: Ավանդաբար ընդունված է, որ դպրոցն ու ծնողը փորձում են լավ արժեքներ սերմանել: Երեխաները լսում են, թե որքան լավ բան է ազնվությունը և այլն, սակայն կյանքում տեսնում են նաև այդ արժեքների խախտումն իրենց ուսուցիչների,ծնողների կամ շրջապատողների կողմից: Այդ դեպքում դրանք վերացական արժեքներ են դառնում: «Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնված է լայն շառավղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների խախտումն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեհամակարգի ձևավորման և պահպանման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում է նաև շախմատ առարկան, նրա դերը և նշանակությունը: Շախմատը երեխաների մեջ զարգացնում է մտածողության ձևերը, բարդ իրավիճակներում որոշումների ընդունման, ինքնավերլուծության կարողությունները, կարգապահությունը և պատասխանատվությունը:

[1] https://lib.armedu.am/files/resource/files/2022-08-02/169a3c46081fda5bfb9b0ea7716707fd.pdf, էջ 24

Ինչպես հայտնի է, մարդու արժեքային համակարգը ձևավորվում է դաստիարակության և սոցիալականացման գործընթացում: Ակնհայտ է, որ երկրորդի դեպքում արժեքային համակարգի ձևավորումը տեղի է ունենում ավելի շատ տարբերային ձևով: Այն չի կրում կազմակերպված բնույթ: Դժվար է ապացուցել, որ այդ գործընթացը կառավարելի դարձնելով, կարելի է հասնել դրական արդյունքների, քանի որ տարբեր կրթական հարացույցների շրջանակներում, մոտեցումները լինում են տարբեր: Մի բան է, ձևավորել արժեքների համակարգ ավտորիտար կառավարման ոճի տեսանկյունից, մեկ ուրիշ բովանդակություն է ստանում նշված գործընթացը, եթե այն նախագծվում և իրականացվում է դաստիարակության և կառավարման ժողովրդավարական ոճի տեսանկյունից:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության հիմնական նպատակն է ներկայացնել և ուսումնասիրել <<Շախմատ>> առարկայի դասավանդման ընթացքում արժեքային համակարգի ձևավորումը աշակերտների մոտ: Այդ նպատակների իրականացումը ենթադրում է կոնկրետ խնդիրների լուծում, որոնք էլ ապահովում են աշխատանքի տրամաբանությունն ու կառուցվածքը:

Առաջադրված նպատակին հասնելու համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

· Վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ մասնագիտական գրականություն:

· Պարզաբանել արժեքային համակարգի դերը Շախմատի դասաժամերին:

· Լուսաբանել արժեքային համակարգի ձևավորման գործընթացը և յուրացումը փորձարարական դասերի ընթացքում

Նպատակը

Կրթական տարբեր աստիճաններում աշակերտի մոտ ձևավորել աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի 4 տիպարների միջոցով, որոնց դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում: Խնդիրներ Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը,

ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն[2]:

Հետազոտության օբյեկտը: Հետազոտության օբյեկտ են հանդիսանում դասարանները, որտեղ կատարել եմ դասապրոցես:

Հետազոտության մեթոդները: Հետազոտության կիրառված մեթոդներն են՝ դիտարկում, թեստավորում, վերլուծություն, գործնական խաղեր և այլն:

[2] Սերգեյ Իվանովիչ Օժեգով - մարդ և բառարան 1964թ,էջ 14

Ժամանակակից աշխարհում մեծացել է հետաքրքրությունը «Շախմատ» առարկայի նկատմամբ: Բազմաթիվ երկրների դպրոցներում «Շախմատը» ուսուցանվում է որպես ուսումնական առարկա: Հայաստանը դարձավ աշխարհի առաջին երկիրը, որն առարկան դարձրեց պարտադիր 2-4-րդ դասարանցիների համար: 2019թ.սեպտեմբերից Ռուսաստանում կտրուկ ավելացել է շախմատը որպես ուսումնական առարկա ուսումնասիրող դպրոցների թիվը:Նման միտումներ կան նաև ԱՊՀ այլ երկրների դպրոցներում:Այս համատեքստում հարց է առաջանում, թե որն է «Շախմատ» առարկայի հանրակրթական արժեքը: Դիտարկենք շախմատի մի քանի առանձնահատկություններ, որոնք կարևոր հանրակրթական արժեք ունեն:Ժամանակակից աշխարհում կարևոր դերունի ուշադրությունը: Ըստ Նոբելյան մրցանակակիր Հերբերտ Սայմոնի,ժամանակակից տնտեսությունը ուշադրության տնտեսություն է: Բոլորը պայքարում են մարդկանց ուշադրությունը գրավելու ուղղությամբ: Ինչը գրավեց մարդու ուշադրությունը, դրան էլ տալու են ժամանակը,փողը, կյանքը: Եվ քանի որ կա ուժեղ մրցակցություն մարդկանց ուշադրությունը գրավելու հարցում, մարդկանց ուշադրությունը ենթարկվում է բազմակողմանի ազդեցությունների: Նման իրավիճակում մարդիկ դժվարությամբ են կարողանում կենտրոնանալ: Իսկ ուշադրությունը սահմանափակ ռեսուրս է: Երբ տարբեր կողմերից փորձում են տիրել այդ ռեսուրսին, մարդիկ խնդիրներ են ունենում ուշադրությունը կենտրոնացնելու հարցում: Պատահական չէ, որայսօր երեխաների մոտ նկատվում է ուշադրությունը կենտրոնացնելու դժվարություն: Երեխաները չեն կարողանումտևական ժամանակ կենտրոնանալ մի բանիվրա: Իսկ առանց տևական կենտրոնացման անհնար է խորքային և նորարար մտածողությունը: Այս առումով շախմատն ունի շատ կարևոր առավելություն: Շախմատ խաղալը նպաստում է ուշադրության կենտրոնացմանը: Շախմատը կլանում է մարդուն, և, տևական ժամանակկենտրոնանալով խաղի վրա, երեխաները կարող են ձեռք բերել ուշադրությունը զարգացնելու, այն ավելի որակյալ դարձնելու հնարավորություն: Ինչպես նշում է հայտնիգրող Մուզիլը. «Կենտրոնանալ, նշանակում է մշտապես հաղթահարել սեփական ծուլությունը[3]»:

Մեր օրերի գլխավոր խնդիրներից մեկն այն է, որ մարդիկ միաժամանակ իրենց ուշադրությունը սևեռում են մի քանի բաների վրա: Աշակերտը միաժամանակ դաս է սովորում, հեռուստացույց է նայում, էլեկտրոնային փոստն է ստուգում, սոցիալական ցանցում նամակ է գրում, զուգահեռաբար նաև սնվում է: Մեծ տարածում ունեցող այս երևույթը բացասաբար է ազդում մարդու ուղեղի արդյունավետության վրա: Դանիել Լևիտինը իր «Կազմակերպված միտք» գրքում գրում է, որ երբ մարդը միաժամանակ մի քանի բանով է զբաղված, նրա էներգիան շատ արագ է սպառվում և մարդն ավելի արագ է հոգնում : [4]

Սերունդների կրթության և դաստիարակության արդյունավետության խնդիրը միշտ եղել է մանկավարժների, փիլիսոփաների, հետազոտողների և հոգեբանների ուշադրության կենտրոնում: Ամերիկացի փիլիսոփա և մանկավարժ Ջոն Դյուին, ով իր աշխատություններով նպաստում էր կրթության առաջադեմ շարժմանը, համոզված էր, որ լավագույն կրթությանը հասնում են կրթության միջոցով. «Ես հավատում եմ ,որ կրթությունը, հետևաբար, ապրելակերպ է և ոչ թե ապագա ապրելու նախապատրաստություն» /Իմ մանկավարժական քույր-1897թ/: Դեռևս Սոկրատեսն էր իր սաներին սովորեցնում տրամաբանորեն և վերլուծելով մտածել, սակայն առաջին անգամ տեսականորեն այն մշակել է

[3] ՇԱՄԱՏԱՑԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ԵՎ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ,ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ,2019թ, էջ 20

[4] Levitin, D., 2014թ, p 56

Ջ.Դյուիին: Իսկ ըստ ռուս հայտնի հոգեբան Ս.Ց. Ռուբինշտեյնի, մարդու մտածողությունը կարելի է զարգացնել միայն ճանաչողական պրոբլեմների լուծման միջոցով: Լ.Ս. Վիգոտսկին էլ ձևակերպել է մի օրենք , որտեղ ասվում է, որ ուսուցմանը հետևում է զարգացումը, իսկ անձը զարգանում է գործունեության մեջ: Ակտիվ գործունեության ընթացքում են զարգանում խնդիրները միասին լուծելու կարողությունները, և ամենակարևորը՝ ինքնուրույն իմացական գործունեությունը, շահագրգռվածություն ցանկացած խնդիր վերլուծելու և հանգուցալուծելու համար: Այնուամենայնիվ, որքան էլ հոգեբանները, փիլիսոփաները առաջարկեն մեթոդներ կամ ռազմավարություններ , ուսումնառության արդյունավետության խնդիրը մնում է չլուծված կամ ոչ ամբողջապես լուծված, քանի որ ուսուցչի համար խնդիր է մնում, թե ինչպե՞ս կիրառվի կամ օգտագործվի այդ գործիքը, արդյո՞ք դասի մոդելը կօգնի հասնել դրան: Ըստ այդմ էլ , յուրաքանչյուր ուսուցիչ գտնում է իր առարկային համապատասխանող ռազմավարություն և տալիս առաջ եկած խնդրի լուծում: Չինական ասացվածքը վկայում է. Կյանքը նման է շախմատին. ընդամենը մեկ քայլը կարող է որոշիչ լինել:

Փորձարարական դասեր

Փորձենք հասկանալ, թե ի՞նչպես է ձևավորվում արժեքային համակարգը շախմատ առարկայի դասաժամերին: Ջ՞է, որ շախմատ խաղալու լավ իմացությունն ու կարողությունը հնարավորություն են տալիս երեխային ավելի լավ տրամաբանել, մտածել, հաշվարկել, ցուցաբերել ուշադրություն ու հետևողականություն, ինչպես նաև կենտրոնանալ դասի և խնդիրների վրա: Շախմատը իր մեջ ներառում է վիթխարի ներուժ, երեխայի մեջ դաստիարակելով նպատակամղվածություն, կամքի
ուժ, ձգտում, համբերություն և դիմացկունություն: Շախմատը երեխայի մոտ ստեղծում
է նախադրյալներ ու ձևավորում արժեքներ, որոնց շնորհիվ նա մեծ հնարավորություն է ունենում ապագայում դառնալու քաղաքակիրթ, հարգալից, ինչպես նաև զիջելու ընդունակ մարդ, որը օժտված կլինի բարության տարբեր հատկանիշներով ու դրսևորումներով: Շախմատի միջոցով ձեռք բերված հնարամտությունն ու խելամտությունը համատեղվելով համբերատարության ու հետևողականության հետ կօգնեն յուրաքանչյուր անձի հասնելու հաջողություններին նաև աշխատանքային այլ բնագավառներում և ցանկացած միջավայրում գտնել իր ուրույն տեղն ու կարևորությունը:

Նախատեսվում է, որ շախմատ առարկան լիովին ուսումնասիրած երեխան պետք է՝

1. Լինի խելացի ու ընդունակ

2. ՈՒնենա մտածելու, հաշվարկելու, ինչպես նաև տրամաբանելու ու ստեղծագործելու միտք և կարողություն
3. Կարողանա տարբերել և դասավորել խնդիրներն ըստ առաջնահերթության
4. Լինի արդար ու լավատես, ունենա պատասխանատվության զգացում
5. Տարբերվի զսպվածությամբ ու լրջամտությամբ:

ՈՒսումնական գործընթացում դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է՝ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում[5] :

Շախմատ առարկայի ուսուցման նպատակները բազմազան են, սակայն առանձնացնենք նրանցից մեկը՝ զինել աշակերտներին շախմատային գիտելիքներով:

Այդ նպատակին հասնելու համար պետք է լուծել կրթադաստիարակչական մի շարք խնդիրներ:

1. Աշակերտներին զինել շախմատային գիտելիքներով, ուսուցանել յուրաքանչյուր խաղաքարի առանձնահատկություններն ու հնարավորությունները:
2. Պատկերացում տալ շախմատ խաղի գաղափարի և նպատակի մասին: Գիտակցել յուրաքանչյուր քայլի կարևորությունը:
3. Սովորեցնել կիրառել մարտավարական տարբեր հնարքներ, օգտագործելով տարբեր խաղաքարերի համագործակցությունը:
4. Կատարել բարդ և խորը հաշվարկներ, ինչպիսիք որ հանդիպում են բարդ խնդիրներում և ցուցադրված պարտիաներում
5. Կազմել խաղի պլան և գտնել ուղիներ դրա իրագործման համար, որը դիտարկել ու սովորել ենք պարտիաներ վերլուծելու ժամանակ:
6. Զարգացնել սովորողների տրամաբանական և ստեղծագործական մտածողությունը, համագործակցային և ինքնուրույն գործունեության կարողություններն ու հմտությունները:

- Խթանել սովորողների մտածողության ինքնուրույնությունը, սեփական գիտելիքներն ինքնուրույն լրացնելու և հարստացնելու կարողությունները:
- Սովորեցնել տեղեկատվության աղբյուրներից օգտվելու, անհրաժեշտ տեղեկությունը ճիշտ ընտրելու կարողություններ:
- Զարգացնել ուսումնառության արդյունքում սովորողների ստացած գիտելիքները, օգտվելով անցյալի ու ներկայի հայտնի շախմատիստների խաղացած պարտիաներից:

[5] Բաբանսկի Յու. –Աշակերտների դաստիրակությունը կոմպլեքսային մոտեցում: էջ 112

- Զարգացնել սովորողների մոտ կամային որակներ (ուշադրություն, զսպվածություն, կամք, նպատակամղվածություն, համառություն)[6]:

[6] Педагогика, под. ред. Ю. К. Бабанского, С. Нойнера и др., М., 1978, 452 с.

Փորձարարական դաս 1:

Փորձարարական դասերը անցկացրեցի ՀՀ Գեղարքունիքի մարզի Զոլաքար գյուղի Ալվարդ Վարդանյանի անվան N2 միջնակարգ դպրոցում՝ 3-րդ և 4-րդ դասարաններում: Դասերի թեման երկու դասարաններում ՝ << Մատային դիրքերի ստեղծում>> : Դասի նպատակն էր՝ աշակերտների մոտ ձևավորել արժեfային համակարգ՝ այն է՝ կարևորել յուրաքանչյուր խաղաքարի դերը շախմատում, շախմատային պարտիայի ժամանակ: Հետազոտելու հաջորդ նպատակը՝ սովորողների մոտ զարգացնել սովորել սովորելու կարողունակություն, դիրքի գնահատման կարևորություն , միմյանց օգնելու, միմյանցից սովորելու հմտություն: Սովորողները բացատման մեթոդով, անցած կանոններով՝ այն է՝ արքաներն հարևան դաշտերում չեն գտնվում, միայնակ արքայով մատ անել չենք կարող, և այլն, լուծեցին տրամագրերը:

Փորձարարական դաս 2:

Երկրորդ դասին անցած մատային դիրքերի ստեղծման դասերը կիրառեցինք գործնականում: Զույգերով՝ նախօրոք շարված խատախտակի վրա, տրված խաղաքարերով ստեղծեցին մատային դիրքեր, սովորածը կիրառեցին գործնականում: Քանի որ գործնական դասը զույգերով էր, նպատակն էր՝ բացահայտել սովորողների մոտ փոխօգնության կարողությունը:

Դասերի վերջում կատարեցի գնահատում՝ էլֆի քարտերով:

1. Ինչ սովորեցի
2. Ինչը կկիրառեմ
3. Ընկերոջ մոտ որ հատկանիշը ամենաշատը դուր եկավ խաղի ընթացքում
   Աշակերտների մեծամասնությունը ընկերոջ մոտ գնահատել էր օգնությունն ու համբերատարությունը, իսկ թե <<ինչ սովորեցի>> հարցին պատասխանել էին՝ խաղաքարերից յուրաքանչյուրը շատ մեծ դեր է խաղում շախմատում:

Եզրակացություն

Այսօր աճող սերնդի դաստիարակության գործընթացը իրականանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակույթային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական, տեղեկատվական և այլն: Մեր՝ ուսուցիչներիս դերը շատ մեծ է աշակերտների մեջ ճիշտ արժեհամակարգ ձևավորելու գործում: Քանի որ երեխաները իրենց օրվա ավելի մեծ մասն անցկացնում են ուսումնական հաստատություններում, հրամայական է դառնում, որ ուսուցիչները ստանձնեն իդեալական

միջավայր ստեղծելու պատասխանատվությունը: Արժեհամակարգ ձեւավորելուց զատ, յուրաքանչյուր ուսուցչի համար, կարծում եմ անհրաժեշտ է տեսնելը՝ իր կատարած աշխատանքի պտուղները գործնականում կիրառված: Սովորողների մեջ արժեքային համակարգի ձեւավորումը առարկայի դասավանդման ընթացքում թեմայով հետազոտական աշխատանքը կատարելուց հետո եկանք հետեւյալ եզրահանգումներին:

- Կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձեւավորումը:
- Արժեքային համակարգը անքակտելիորեն կապված է այնպիսի հասկացությունների հետ, ինչպիսիք են՝ մշակույթը և հասարակությունը: Մարդը դրսևորվում է սոցիումի մեջ և իր վրա է կրում տվյալ միջավայրի մշակութային փոփոխությունները:
- Դպրոցում աշակերտը պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը և ընդունի դրանք: Այդ ամենի պտուղները կլինեն իրական արժեքները:
- Ե՛վ լեզուն, և՛ մշակույթը մեծ դեր են խաղում աշակերտների անհատականության և արժեհամակարգի ձեւավորման մեջ:
- Առարկաների ճիշտ համագործակցության և միջառարկայական կապերի շնորհիվ է, որ աշակերտների մեջ արժեքները ձեւավորվում են ավելի ընդլայնված ու խորը:

Հետազոտության արդյունքները ցույց տվեցին նաև, որ արժեքային համակարգի ձեւավորման սկզբում մեծ է ծնողների դերը: Երեխաները ընկալում են համամարդկային արժեքները, որոնք փոխանցվում են նրանց, որպես բացարձակ իրողություն: Միջին տարիքում երեխաները ավելի շատ փնտրտուքների մեջ են: Նրանց վրա մեծ է շրջապատի ազդեցությունը: Կրկնօրինակում են իրենց հասակակիցներին, հայտնի մարդկանց, ծնողներին, և այս համատեքստում է, որ կարծես թե արժեքների ծաղկաքաղ է տեղի ունենում նրանց մոտ:

Առաջարկություններ

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում թեմայով հետազոտական աշխատանքը ավարտելուց հետո կարող ենք անել հետևյալ առաջարկությունները.

- Սովորողների արժեքային համակարգը բազմակողմանի զարգացնելու համար հարկ է նրանց ավելի շատ ներառել արտադասարանական միջոցառումների մեջ:
- Թատրոններ հաճախելը, էքսկուրսիաները, պատմամշակութային վայրեր այցելելը, հայտնի արվեստագետների, քանդակագործների և արհեստագործների արվեստանոցներ ու արհեստանոցներ այցերը ևս պետք է ներառված լինեն ուսումնական հաստատության գործունեության մեջ, ինչը կարծում եմ էլ ավելի պատկերավոր կդարձնի արժեքների ըմբռնումը:
- Դասաժամերին հավելյալ քննարկումները, պատմությունից օրինակները ևս լավ միջոց են արժեհամակարգ ձևավորելու:

  Միջմշակութային հաղորդակցությունը, նոր մշակույթների հետ ծանոթությունը, նույնպես կարող են ձևավորել արժեքներ սովորողների մեջ:
- Արժեհամակարգ լավագույնս կարող է ձևավորվել նաև.
  - ❖ Ինտելեկտուալ խաղ-մրցույթների միջոցով:

- ❖ Սովորողների ինքնակրթությունը խրախուսելու միջոցով:
- ❖ Ակտիվ գործիչների, ազգային հերոսների հետ հանդիպումներ կազմակերպելու միջոցով:
- ❖ Դասաժամերին ՏՀՏ գործիքների ավելի շատ կիրառության միջոցով:
- ❖ Կամավոր աշխատանքների մեջ աշակերտներին ընդգրկելով:

- Կազմակերպել հանդիպումներ, ակտիվ գործիչների հետ:

Գրականության ցանկ

Գրքեր՝

1. Педагогика, под. ред. Ю. К. Бабанского, С. Нойнера и др., М., 1978
2. Բաբանսկի Յու. -Աշակերտների դաստիրակությունը կոմպլեքսային մոտեցում
3. **Levitin, D., 2014**թ
4. ՇԱԽՄԱՏԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ԵՎ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ,ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ,**2019**թ
5. Սերգեյ Իվանովիչ Օժեգով - մարդ և բառարան 1964թ

Կայքեր և էջեր

1. https://lib.armedu.am/files/resource/files/2022-08-02/169a3c46081fda5bfb9b0ea7716707fd.pdf,
2. https://escs.am/am/news/6707

Օրվա դասի պլան

Ամիս, ամսաթիվ՝

Առարկա՝<<Շախմատ>>

Դասարան՝ 3-րդ Դասի թեմա՝<<Մատային դիրքերի ստեղծում>>:

Դասի նպատակը՝ Ուղղորդել սովորողներին, ստեղծել ստեղծագործական միջավայր՝ սովորողների մոտ ձևավորել մատային դիրքեր ստեղծելու համար:

Վերջնարդյունք՝ ՍՈվորողը կկարողանա ստեղծել մատային դիրքեր 5-ից ավելի խաղաաբարերով

Անհրաժեշտ նյութեր՝ Խաղաբար, խաղատախտակ, դասագիրք, տետր:

Տևողությունը՝ (45րոպե)

Դասի ընթացքը՝ (2րոպե) նախավարժանք դասին պատրաստվելու համար:

Խթանման փուլ ՝(5րոպե)

Խթանիչ հարցերի միջոցով ամփոփել նախորդ տարվա դասերը՝

Իմաստի ընկալման փուլ՝ (20րոպե)

Աշակերտներին ծանոթացնել մատային դիրքեր ստեղծման կանոններին,, նշել որ մատային դիրքերի ստեղծման կարևոր պայմանը անցած տարվա կանոնների ճիշտ կիրառումն է:

Կշռադատման փուլ՝ (10րոպե)

Սովորողների գիտելիքները ամբողջացնելու և ամրապնդելու համար կատարել նոր նյութի ամփոփում, կրկնել և վերհիշել անվտանգության կանոնները:

Հանձնարարել աշակերտներին գրատախտակի շարված խաղաբարերի միջոցով ստեղծել մատային դիրքեր՝ հիշելով կանոնները, կիրառել բացառման մեթոդը:

Ամփոփում՝ (7րոպե)

Քառաբաժանի միջոցով պարզել սովորողների զգացողությունները՝.

Ինչ գիտեին, ինչը նոր իմացան, ինչն էր, որ մնաց անհասկանալի:

Առարկա **ՇԱԽՄԱՏ**		
Դասարան 3-րդ Ա, Բ, Գ, Դ	Ուս. տարի 2023-2024	
Բաժին	**ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**	
Թեմա	**Մարտավարական հնարքներ**	
Դասեր	**____Կապ,:**	
Բաժնի նպատակը	Զարգացնել սովորողների որոնողական գործունեությունը, վերլուծական կարողությունները: Խթանել այլընտրանքային մտածողության զարգացումը: Խթանել ստեղծարար մտածողության զարգացումը:	
Դասի նպատակը	Սովորողների միջոցով բացահայտել նոր նյութը՝ ձգտել, քայլ առ քայլ մոտենալ Մարտավարություն բաժնի նպատակներին:	
Վերջնարդյունքներ	Արդյունքում սովորողը պետք է կարողանա՝ • Գնահատել իրավիճակը • **Որոնել** և **գտնել** մարտավարական հնարքը, **իրականացնել** մարտավարական հնարքը	
Ընդհանրական խաչվող հասկացությունները:	**Անհատական և մշակութային արտահայտում** Մարտավարական իրավիճակների ստեղծում և մոդելավորում: **Համակարգեր և մոդելներ** Մարտավարական մոդելները հասկանալու և կիրառելու հմտություններ: **Պատճառ և հետևանք, մեխանիզմ և կանխատեսում** Յուրաքանչյուր որոշման և քայլի հիմքում գործող մեխանիզմների կիրառում: Մարտավարական իրավիճակներում պատճառահետևանքային կապերի վերհանման և վերլուծության հմտությունների ձևավորում:	
Միջառարկայական կապերը	Մայրենի լեզու – Անվանումները կարդալու, մտապահելու, սեփական մտքերը գրագետ, տրամաբանված և համոզիչ արտահայտելու կարողություն: Նորի ստեղծում:	

	Մաթեմատիկա - Խնդրի պայմանը և պահանջը բացահայտելու և լուծելու կարողություն: Խնդրի լուծման փուլերը պլանավորելու կարողություն: Արվեստ - Նորի ստեղծում: Գեղեցիկի ընկալում:
Անհրաժեշտ նյութեր, տեխնիկական միջոցներ	Շախմատի ցուցադրական խաղադաշտ խաղաքարերով, շախմատի խաղադաշտեր խաղաքարերով, դասագիրք, աշխատանքային տետր:
Ուսուցման մեթոդներ	Կարելի է օգտագործել «Սոկրատյան մեթոդ»-ը՝ սովորողների միջոցով բացահայտել նոր նյութը: Զրույց, մտքերի տարափ, հարցադրումներ, քննարկումներ կոնկրետ տրամագրերի շուրջ:Խմբային, կամ ինքնուրույն աշխատանքների կազմակերպում:
Առաջարկվող գործունեության ձևեր	Աշխատանք դասագրքով և աշխատանքային տետրով, մարտավարական խնդիրների լուծում
Գնահատում	Իրականացվում է ձևավորող գնահատում:

Դասի ընթացքը

- Աշակերտների հաշվառում **2 րոպե**
- Նախորդ նյութի ամփոփում հարցերի միջոցով **5 րոպե**
- Մարտավարական հնարքի անվանման ընկալում մտագրոհի միջոցով **5 րոպե**
- Նոր նյութի բացահայտում տրամագրերի ակտիվ քննարկմամբ և նյութի ամրապնդում **20 րոպե**
- Տրամագրերի լուծում աշխատանքային տետրերում **10 րոպե**
- Ամփոփում և գնահատում **3 րոպե**

Ուղղորդող հարցեր

- Տրամագրում ո՞ր արքան է ավելի ապահով, իսկ որը՝ վտանգված:
- Ո՞ր կողմի խաղաքարերն են ավելի ակտիվ և համագործակցող:
- Ո՞ր կողմի զինվորային կառուցվածքն է ավելի լավը:
- Ի՞նչ թուլություններ ունեն կողմերը:
- Ո՞ր թուլություններն են ավելի կարևոր, իսկ որո՞նք են երկրորդական:
- Ո՞ր կողմը ունի առավելություն, ինչու՞:
- Ինչպե՞ս օգտագործել թուլությունները:
- Ինչպե՞ս օգտագործել ուժեղ կողմի առավելությունները:
- Ի՞նչ մարտավարական հնարքներ են միահյուսվել: